

Ա. Կորնթացիս 9:19-23 (1 Corinthians 9:19-23)

«Նախապատուութիւն»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 09.15.96

Ա. Կորնթացիս 9:19-23: *«Քանզի թէ եւ ես ամենէն ազատ էի, բայց իմ անձս ամենուն ծառայ ըրի, որպէս զի շատերը շահիմ: Հրեաներուն հետ հրեայի պէս եղայ, որպէս զի հրեաները շահիմ, օրէնքի տակ եղողներուն հետ օրէնքի տակ եղողի պէս եղայ, (ոչ թէ ես օրէնքի տակ էի,) որպէս զի օրէնքի տակ եղողներն ալ շահիմ. օրէնքի տակ չեղողներուն հետ օրէնքի տակ չեղողի պէս եղայ, (ոչ թէ ես Աստուծմէն օրէնք չունէի, հապա Քրիստոսին օրէնքին տակ էի,) որպէս զի օրէնք չունեցողներն ալ շահիմ. տկարներուն հետ տկարի պէս եղայ, որպէս զի տկարները շահիմ. ամենուն հետ ամէն բան եղայ, որպէս զի մէկ բանիները ապրեցնեմ: Եւ ասիկա Աւետարանին համար կ'ընեմ, որպէս զի անոր կցորդ ըլլամ:»*

Արդեօք ըսա՞ծ ես - «*եւ ինչո՞ւ Հայ եմ*», ուրիշ մը կրնայ ըսել «*եւ ինչո՞ւ Ռուս եմ*» կամ Զինացի, Հրեայ... եւ այլն:

Բնական է՝ եթէ Հայ ծնած եմ ուրեմն Հայ այրիւն կայ մէջս: Ինչո՞ւ Աստուած դրած է զիս այս ազգին մէջ:

Աստուած իր պատկերով ստեղծած է մեզ և նաեւ՝ Հայ ժողովուրդը: Հպարտ զգալու ենք որ Հայ ենք. անշուշտ ո՛չ թէ ուրիշ ազգերէ բարձր ենք, հապա՝ անգուգական ենք որպէս Հայ ժողովուրդ: Մեր յատուկ ազգութիւնը պարգեւ է Աստուծմէ: Ուրեմն, ինչո՞ւ Աստուած այս պարգեւը տուած է մեզի:

Պօղոս առաքեալ կը բացատրէ թէ որպէս յատուկ ազգ կրնանք Աւետարանը տարածել շատերու: Տէր Յիսուս՝ ինքը - նաեւ Պօղոս, այս միջոցով տարածեցին Աւետարանը:

Այս առաւօտ երբ կը մտածենք թէ ինչ՞ է մեր էն կարեւոր պաշտօնը որպէս Հայ Եկեղեցի գալիք տարուան համար - յեշտենք Պօղոս առաքեալին իրատը: Մեր Հայ ազգ ըլլալը միջոց է մեր պաշտօնը կատարելու, այսինքն տարածելու Յիսուսի Աւետարանը:

Յանախ մեզի կոչ կ'ուղղուի (կը տրուի) վառ պահելու մեր մշակոյթը, լեզուն, պատմութիւնը, եւայլն: Կուզենք քաջալերել մեր հայ դպրոցը, կուզենք օգնել մեր հայրենիքը ամէն կերպով:

Արդիօք մեր մշակոյթը արգե՞լք է Աւետարանին տարածման: Շատեր կը մտածեն թէ Հայ եկեղեցին միայն Աստուած պաշտելու վայր մը ըլլալու է եւ ո՛չ թէ Հայ մշակոյթի պահպանումը:

Ահա կարելորդ հարց մը մեզի այսօր. ինչպե՞ս կրնանք Աւետարանը տարածել և նոյն ատեն մեր հայ մշակոյթը պահպանել:

Մշակոյթը միջոց մը ըլլալու է Աւետարանը տարածելու:

Երբ մեր հայկական թերթերը կարդանք, հոն կը տեսնենք թէ անոնք են Հայ հարսուները, որոնք ունին բարձր տիտղոսներ և անոնք են, որ առատ նուիրատուութիւններ կընեն հայկական նպատակներու համար:

Երբ նկատի առնենք մեր եկեղեցին, հոն ալ կը տեսնենք որ պատիւ կը փնտոտենք մեր գործերուն համար. կուզենք որ մեր բարի գործերը յիշուին եւայլն: Արդիօք, Տէր Յիսուս ին՞չ օրինակ տուաւ մեզի – Ան հեզ էր ու խոնարհ, Ան եկաւ ծառայելու և փրկելու մարդկութիւնը: Որպէս հաւատացեալներ, մեզի պէտք է ծառայել և Քրիստոսի օրինակին հետեւիլ:

Հոովմայեցիս 1:16ը կ'ըսէ, *«ես ամօք չեմ սեպեր Քրիստոսի Աւետարանը, ան Աստուծոյ զօրութիւնն է բոլոր հաւատացեալներուն փրկութեան համար՝ առաջ Հրեային ու ետքը Յոյնին:»* Աւետարանը սքանչելի պատգամ է կեանքի, յոյսի և փրկութեան բոլոր մարդկութեան:

Ուրեմն որպէս Հայ հաւատացեալներ, կրնանք մեր մշակոյթը գործածել և տարածել Քրիստոսի Աւետարանը մեր Հայ ազգին:

Թող Պօղոսի կոչը մեզ արթնցնէ գալիք տարուան համար. թող Տէր Յիսուս ըլլայ ՝ամէնը ամէն բանի մէջ՝. թող Տէրը առաջին տեղը գրաւէ մեր կեանքներուն մէջ. գործոն ըլլանք մշակութային չանգներու մէջ, սակայն յիշենք մեր նպատակակէտը՝ արծարծել Քրիստոսի Աւետարանը մեր Հայ ազգակիցներուն: